ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԴՈՆԱՐԱ ԼԱԶԱՐՅԱՆ

Վերջին 30 տարում տնտեսագիտական հետազոտություններում ավելի ու ավելի հաճախ են անդրադառնում արտադրության նյութական և ոչ նյութական ոլորտներին վերաբերող հարցերին։ Դա բացատրվում է նրանով, որ արտադրության զարգացման ներկա պայմաններում գնալով բարձրանում է արտադրության ոչ նյութական ոլորտի ճյուղերի դերը, ինչպես հասարակական արտադրության արդյունավետության վրա ազդելու, հասարակության անդամների պահանջմունքներն ավելի լրիվ բավարարելու, այնպես էլ ազատ ժամանակի ավելացման ու արդյունավետ օգտագործման և տնային տնտեսության մեջ զբաղվածներին հասարակական արտադրության մեջ ներգրավելու առումով։ Միևնույն ժամանակ, չնայած այդ բնագավառին նվիրված բազմաթիվ հետազոտություններին, մի շարք պրոբլեմների վերաբերյալ առայժմ միասնական տեսակետներ չկան։ Դեռևս բանավիճային են ոչ նյութական ոլորտը նյութական արտադրությունից սահմանազատելու, ժողովրդական տնտեսության ճյուղերն այդ երկու ոլորտների միջև դասակարգելու, ոչ նյութական ոլորտում աշխատանքի բնույթի հարցերը։

Նյութական և ոչ նյութական ոլորտների վերաբերյալ տարբեր տնտեսագետների հայացքների ուսումնասիրությունը թույլ է տալիս դրանց սահմանազատման հարցում առանձնացնել հետևյալ ուղղությունները։

1. Տնտեսագետների մեծ մասը ժողովրդական տնտեսության այդ ոլորտների էությունը բացատրում է աշխատանքի արդյունքի տեսակետից, որը կարող է ունենալ կամ չունենալ նյութական տեսք[1]*։ Օրինակ. Պ. Մոսկվինի կարծիքով «Նյութական արտադրության ոլորտին պատկանում են այն ճյուղերը, որոնց բնորոշ հատկանիշն այն է, որ այդ ճյուղերում զբաղված աշխատանքն առարկայանում է սպառողական արժեքներում, իրերում»*[2]*։ Ռ. Իբրահիմովան գտնում է, որ «ժողովրդական տնտեսությունը նյութական և ոչ նյութական արտադրության բաժանելու որոշիչ հատկանիշը նյութական արտադրության ոլորտի աշխատանքի արդյունքի իրայնության հատկանիշն է, ի տարբերություն ոչ նյութական ոլորտի, որտեղ աշխատանքի արդյունքը հանդես է գալիս ոչ նյութական տարբեր ծառայությունների ձևով»*[3]*։ Դ. Պրավդինը ոչ արտադրական ոլորտը սահմանում է որպես անմիջականորեն նյութական հարստության ստեղծմանը չմասնակցող գործունեության տեսակնե-*

---

[1] П. В. Москвин, Вопросы статистики национального дохода СССР, М., 1955, с. 19; Д. И. Правдин, Развитие непроизводственной сферы при социализме (темпы, пропорции, перспективы), М., 1968, с. 25—26; У. К. Шеденов, Сфера обслуживания в процессе воспроизводства в условиях развитого социализма (докт. дис.), Алма-Ата, 1978, с. 63; Р. М. -кызы Ибрагимова, Развитие непроизводственной сферы и занятость населения в Азербайджанской ССР (канд. дис.), Баку, 1975, с. 27.

[2] П. В. Москвин, *նշվ. աշխ., էջ 19։*

[3] Р. М.-кызы Ибрагимова, *նշվ. աշխ., էջ 27։*

րի ամբողջություն[4]։ *Սակայն իրականում ժողովրդական տնտեսության ճյուղերն ըստ նյութական արդյունք ստեղծելու հատկանիշի բաժանելն անհնար է։ Ոչ նյութական ոլորտին դասվող գործունեության բնագավառներում ևս աշխատանքի արդյունքներն ունեն իրային տեսք, ինչպես օրինակ, նկարչության, քանդակագործության, գիտության և այլ բնագավառներում։ Հետևաբար, այդպիսի կարծիքը ճիշտ է ոչ նյութական ոլորտի արդյունքների որոշ մասի և ոչ թե դրանց բոլորի համար։ Բացի այդ, երկու ոլորտների սահմանազատման չափանիշը պետք է փնտրել աշխատանքի պրոցեսում։*

2. Մի շարք տնտեսագետներ նյութական արտադրության բնորոշ գիծը համարում են բնության առարկաների և ուժերի վրա մարդու ներգործությունը ի տարբերություն ոչ նյութական արտադրության, որտեղ աշխատանքի պրոցեսում ներգործության օբյեկտը մարդն է[5]։ *Այսպես, Գ. Իվանովը գրում է. «նյութական արտադրության չափանիշը՝ մարդու վերափոխիչ ներգործությունը բնության և նրա ուժերի վրա, որոշում է նրա բոլոր մնացած էական գծերը»*[6]։ *Ե. Չերնիշը ևս նույն միտքն է հայտնում։ «Արտադրական ոլորտի աշխատողների աշխատանքի բովանդակությունը,— գրում է նա,— բնության, մատերիայի վրա ներգործությունն է, մատերիայի վերափոխումը մարդկային պահանջմունքների բավարարման համար, այսինքն՝ արտադրական ֆունկցիաների կատարումը»*[7]։ *Գ. Մորգոևը ոչ արտադրական ոլորտը մեկնաբանում է որպես այնպիսի ոլորտ, որտեղ «աշխատանքային գործունեությունն ուղղված է ոչ թե բնության առարկաների և ուժերի վրա, այլ կայանում է մարդու կամ ամբողջ հասարակության վրա ներգործելու մեջ»*[8]։ *Վերոհիշյալ տեսակետի ռացիոնալ կողմն այն է, որ նրա կողմնակիցները փորձում են երկու ոլորտների հիմնական տարբերությունը գտնել աշխատանքի պրոցեսում, չնայած նրանցից շատերն այն ձևակերպում են ոչ հստակ։ Ինչպես հայտնի է, բնության վրա ներգործությունը հատուկ է աշխատանքի ցանկացած պրոցեսին. դա աշխատանքի համընդհանուր հատկանիշն է, քանի որ «աշխատանքը նախ և առաջ մարդու և բնության միջև կատարվող պրոցես է, մի պրոցես, որի մեջ մարդն իր սեփական գործունեությամբ միջնորդավորում, կարգավորում և վերահսկողության է ենթարկում նյութերի փոխանակությունը բնության և իր միջև»*[9]։ *Մարդն ինքը պատկանում է բնությանը, նրա աշխատանքը բնության ուժերի մի տարատեսակն է, որի մասին բազմիցս նշել է Կ. Մարքսը*[10]։ *Իհարկե, մարդն իր ֆիզիկական և հոգևոր ընդունակություններով առանձնանում է բնության մնացած մասից և ոչ թե ամբողջ բնությունից, որովհետև ընդհանուր առմամբ նա ինքը բնության մի մասն է։*

Եթե հետևենք այս տնտեսագետների կողմից ժողովրդական տնտեսության ճյուղերի դասակարգմանն ըստ նշված հատկանիշի, ապա կտեսնենք,

---

[4] Д. И. Правдин, *նշվ. աշխ., էջ 31։*

[5] *Զ. Գ. Ազիզյան, Բնակչության զբաղվածությունը Հայկական ՍՍՀ ծառայությունների ոլորտում (դիս. տնտ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճան հայցելու համար, Երևան, 1974, էջ 8, պահվում է ՀՍՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտում)* Г. П. Иванов, Непроизводственная сфера и социалистическое воспроизводство, М., 1978, с. 9; Е. Н. Черныш, Тенденции развития основных отраслей непроизводственной сферы (канд. дис.), Минск, 1971, с. 12; Г. Т. Моргоев, Методологические и практические проблемы формирования трудовых пропорций между производственной и непроизводственной сферами при социализме (канд. дис.), Ростов-на-Дону, 1973, с. 28.

[6] Г. П. Иванов, *նշվ. աշխ., էջ 9։*

[7] Е. Н. Черныш, *նշվ. աշխ., էջ 12։*

[8] Г. Т. Моргоев, *նշվ. աշխ., էջ 28։*

[9] *Կ. Մարքս, Կապիտալ, հ. I, Երևան, 1954, էջ 188։*

[10] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 19, с. 13; т. 23, с. 188, 214.

որ նրանք ոչ նյութական ոլորտի մեջ են մտցնում գործունեության այնպիսի տեսակներ, ինչպես մեծածախ առևտուրը, հասարակական սնունդը, բնակարանային կոմունալ տնտեսությունը և կենցաղային սպասարկումը[11], որոնցում աշխատանքի օբյեկտը մեծ մասամբ բնության առարկաներն են։ Սակայն, դա հակասում է ոչ նյութական ոլորտի՝ նրանց արդեն ընդունած հատկանիշին, ըստ որի աշխատանքն այդ ոլորտում անմիջականորեն ուղղված պետք է լինի մարդկանց վրա։

3. Որոշ տնտեսագետներ ժողովրդական տնտեսությունը երկու ոլորտների բաժանելու հիմքում դնում են աշխատանքի արդյունքների վերարտադրելիությունը[12]։ «Նյութական արտադրությունը, և դրանում է նրա կարևորագույն հատկանիշը, բնութագրվում է արտադրանքի վերարտադրելիությամբ, որը պայմանավորված է հասարակական արտադրության պրոցեսի անընդհատությամբ»,— գրում է Գ. Սապովը[13]։ Առաջին հայացքից կարող է թվալ, թե այս տեսակետը ճիշտ է լուծում հարցը։ Բայց պետք է ուշադրություն դարձնել վերարտադրելիություն հասկացության անորոշության վրա։ Վերարտադրել ինչ որ բան, ընդհանրապես նշանակում է կրկնել նույն պրոցեսը, նման գործողությունները կատարել և արտադրել նույն արդյունքը, ինչ նախկինում։ Այս դեպքում վերացարկվում են որոշ երկրորդական բնույթ կրող տարբերություններից, մի կողմ են թողնվում արդյունքների կատարելագործման որոշ մոմենտներ։ Այս դեպքում ի՞նչն է խանգարում վերարտադրելի համարել նաև առևտրի, հասարակական սննդի, սոցիալական ապահովության, սպորտի, կրթության և այլ հիմնարկների աշխատողների գործունեությունը, որոնք Գ. Սապովը դասում է ոչ նյութական ոլորտին[14]։ Վերարտադրելիությունը որպես նյութական արտադրության գլխավոր հատկանիշ ընդունելը կարող է կասկածի տակ դնել նաև յուրահատուկ ճարտարապետական կառույցների շինարարության, որսի և այլ արտադրությունների՝ նյութական ոլորտին պատկանելը։ Անհասկանալի է նաև, թե ինչու է Գ. Սապովը մարդատար տրանսպորտը և բնակչությանն ու ոչ նյութական ոլորտին սպասարկող կապը դիտում որպես ոչ նյութական արտադրություն, իսկ տրանսպորտի և կապի մյուս մասը՝ որպես նյութական արտադրություն[15]։ Այստեղ տարբերությունը արդյունքի սպառման ձևն է, որը ոչնչով չի ազդում աշխատանքի արդյունքի վերարտադրելիության վրա, քանի որ և՛ մարդատար, և՛ բեռնատար տրանսպորտում աշխատանքը և դրա արդյունքը՝ տարածական տեղափոխությունը, նույնն են։ Այս պնդումն իրավացի է նաև ամբողջ կապի համար։

4. Տնտեսագետների մյուս խումբը ոչ նյութական կամ ծառայությունների ոլորտը բնութագրում է որպես մարդկանց պահանջմունքներն անմիջականորեն բավարարող ճյուղերի ամբողջություն[16]։ Տվյալ դեպքում այդ տնտեսագետները շփոթում են «ծառայությունների ոլորտ» և «սպասարկման ոլորտ», հասկացությունները՝ նույնացնելով դրանք։ Դրան նպաստում է այն հանգամանքը, որ այդ երկու բառերն իմաստով շատ մոտ են։ Բայց քանի որ տնտեսագիտական առօրյայում որպես նույնական կատեգորիաներ լայնորեն օգտագործվում են «ոչ նյութական ոլորտ» և «ծառայությունների ոլորտ», «ոչ նյութական բարիքներ» և «ծառայություններ» տերմինները, ապա կարիք չկա

---

11 Г. П. Иванов, նշվ. աշխ. էջ 9, Е. Н. Черныш, նշվ. աշխ., էջ 16, Г. Т. Моргоев, նշվ. աշխ., էջ 109։

12 Г. В. Сапов, Непроизводственная сфера экономики, М., 1967, с. 4; М. В. Колганов, Национальный доход, М., 1959, с. 90.

13 Г. В. Сапов, նշվ. աշխ., էջ 4։

14 Նույն տեղում, էջ 9։

15 Նույն տեղում։

16 С. И. Соколова, Совершенствование планирования сферы обслуживания в аспекте воспроизводства рабочей силы (канд. дис.), М., 1973, с. 11 և ուրիշներ։

խառնաշփոթ ստեղծել և ծառայությունների ոլորտը դիտել իբրև սպասարկման ոլորտ։

5. Վերջին տեսակետի ներկայացուցիչները չեն առանձնացնում նյութական արտադրության և ծառայությունների ոլորտի էական տարբերությունը։ Նրանք յուրաքանչյուր ոլորտի սահմանները որոշում են մի շարք հատկանիշներով կամ «չափանիշներով», ինչպես նշում են նրանցից ոմանք[17]։ Մ. Սոլոդկովը, օրինակ, դրել է. «նյութական արտադրության չափանիշներ են հանդիսանում, առաջին, աշխատանքի արդյունքի իրայնությունը, երկրորդ, արդյունքի վերարտադրելիությունը, երրորդ, աշխատանքի պրոցեսում մարդու և բնության միջև նյութերի փոխանակությունը, չորրորդ, բնության նյութի օգտագործումը որպես աշխատանքի առարկա, հինգերորդ, մարդկանց ներգործությունը բնության առարկաների վրա՝ աշխատանքի գործիքների միջոցով»[18]։ Սակայն, իրականում, գործունեության երկու ոլորտների միջև եղած բոլոր տարբերությունների մեջ պետք է փնտրել գլխավոր, էական առանձնահատկությունը, որը որոշում է դրանց բնորոշ բոլոր գծերը, այսինքն՝ պետք է գտնել դրանց սահմանազատման չափանիշը։

Երկու ոլորտների սահմանները պարզորոշ չեն ձևակերպված նաև ՍՍՀՄ կենտրոնական վիճակագրական վարչության (ԿՎՎ) և պետպլանի կողմից պաշտոնապես ընդունված ժողովրդական տնտեսության ճյուղերի գործող դասակարգման մեջ, ըստ որի «նյութական արտադրության ոլորտին պատկանում են գործունեության այն տեսակները, որոնք նյութական բարիքներ են ստեղծում նյութերի, էներգիայի տեսքով և բեռների փոխադրման, արդյունքների պահպանման, տեսակավորման, փաթեթավորման, և այլ ֆունկցիաների ձևով, որոնք հանդիսանում են արտադրության պրոցեսի շարունակությունը շրջանառության ոլորտում»[19]։ Ինչպես տեսնում ենք, այստեղ նյութական արտադրության սահմանների որոշման համար օգտագործվում են մի շարք հատկանիշներ, իսկ բեռների փոխադրման, արդյունքների պահպանման, տեսակավորման և փաթեթավորման կողքին չի նշվում, թե գործունեության ինչպիսի տեսակներ են նկատի առնվում այլ ֆունկցիաների տակ, որոնք «հանդիսանում են արտադրության պրոցեսի շարունակությունը շրջանառության ոլորտում»։ Ինչպես հայտնի է, արտադրության պրոցեսը հատուկ է և՛ նյութական, և՛ ոչ նյութական ոլորտին, ուստի վերջին ձևակերպումն անորոշ է դառնում։ Նյութական պետք է համարվեն նաև այն ֆունկցիաները, որոնք ոչ նյութական արտադրության պրոցեսի շարունակությունն են շրջանառության ոլորտում։ Անշուշտ, «արտադրության պրոցես» ասելով այստեղ նկատի է առնվում միայն նյութական արտադրությունը։ Մեր կարծիքով, ավելի ճիշտ է հարցի այնպիսի դրվածքը, որի դեպքում երկու ոլորտների սահմանազատման չափանիշը փնտրվում է արդյունքների ստեղծման պրոցեսում՝ բուն աշխատանքում։

Աշխատանքի պրոցեսի տեսակետից նյութական և ոչ նյութական ոլորտների միջև գլխավոր տարբերությունն այն է, որ նյութական ոլորտում տեղի է ունենում անմիջական, ռեալ վերափոխող ներգործություն բնության առարկաների և ուժերի վրա։ Ոչ նյութական ոլորտում աշխատանքային գործունեությունն անմիջականորեն չի ուղղված բնության առարկաների և ուժերի վրա։ Աշխատանքն այստեղ ներգործում է անմիջականորեն մարդկանց, իսկ

---

[17] М. В. Солодков, Непроизводственная сфера при социализме, М., 1978, с. 86; Я. А. Кронрод, Общественный продукт и его структура при социализме, М., 1958, с. 8; В. С. Неркарарян, Производительный и непроизводительный труд (автореф. докт. дис., Ереван, 1972, с. 7); А. И. Кочерга, Сфера обслуживания населения, М., 1979, с. 57.

[18] М. В. Солодков, *նշվ. աշխ., էջ 86,*

[19] «Методические указания к разработке государственных планов развития народного хозяйства СССР», М., 1974, с. 702.

անուղղակիորեն՝ բնության վրա, իդեալականորեն արտացոլելով բնության վրա անմիջական ներգործության արդյունքները մարդկանց հասկացություններում, ընդհանրացնելով դրանք և այդ ներգործությանը տալով ավելի նպատակասլաց ուղղվածություն։

Ելնելով այդ չափանիշից՝ ժողովրդական տնտեսության ճյուղերը նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտների միջև կարելի է ստորաբաժանել հետևյալ կերպ. նյութական արտադրության ոլորտ՝ 1. արդյունաբերություն (այդ թվում շինարարություն), 2. գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն, 3. տրանսպորտ և կապ, 4. բնակարանային-կոմունալ տնտեսություն, 5 կենցաղային սպասարկման մի մասը (բացի 15-րդ կետում նշված գործունեության տեսակներից). ոչ նյութական արտադրության ոլորտ՝ 6. առողջապահություն, ֆիզկուլտուրա և սոցիալական ապահովություն, 7. կրթություն, 8. գիտություն և գիտական սպասարկում, 9. կուլտուրա և արվեստ. 10. ֆինանսավարկային համակարգ, պետական ապահովագրություն, 11. պետական ապարատ, 12. կուսակցական և հասարակական կազմակերպություններ, 13. առևտուր, նյութատեխնիկական մատակարարում և իրացում, մթերումներ, 14. հասարակական սնունդ, 15. կենցաղային սպասարկում այն մասով, որն ընդգրկում է վարձութային ձեռնարկությունները, տեղեկատու, թարգմանչական և մեքենագրական բյուրոները, իրավաբանական կոնսուլտացիաները, վարսավիրանոցները, բաղնիքները և այլն։ ՍՍՀՄ պլանավորման և վիճակագրության պրակտիկայում կիրառվող ժողովրդական տնտեսության ճյուղերի դասակարգումը դրանք հիմնականում ճիշտ է բաժանում նյութական և ոչ նյութական ոլորտների միջև։ Այնուամենայնիվ, այդ բնագավառում դեռևս կան որոշ թերություններ։ Ամենից առաջ դա վերաբերում է տրանսպորտը և կապը երկու ոլորտների միջև բաժանելուն։ Նյութական արտադրության մյուս ճյուղերին սպասարկող տրանսպորտը և կապը ԿՎՎ-ն դասում է նյութական ոլորտին, իսկ բնակչության պահանջմունքները բավարարող և ոչ նյութական ոլորտին սպասարկող կապը՝ ոչ նյութական ոլորտին։ Նման բաժանումն արհեստական է, որովհետև ինչ նպատակների էլ ծառայի տրանսպորտում ծախսվող աշխատանքը, աշխատանքի պրոցեսի և արդյունքի տեսակետից այն համասեռ ճյուղ է։ Նյութական արտադրության մյուս ճյուղերի նման աշխատանքն այստեղ անմիջականորեն ուղղված է բնության առարկային (տրանսպորտային միջոցին) և դրանցից տարբերվում է այն բանով, որ նրա ֆունկցիան աշխատանքի արդյունքների կամ մարդկանց տարածական տեղափոխությունն է։ Կապի բնագավառում տեղափոխությունը հանդես է գալիս ինֆորմացիան տարածականորեն հաղորդելու ձևով։

Ընդհանրապես արդյունքի սպառման ձևը չի կարող բացատրել նրա ստեղծման բնույթը։ Ըստ սպառման բնույթի լինում են արտադրական կամ անձնական սպառման բարիքներ, որոնց համապատասխան ամբողջ արտադրությունը բաժանվում է արտադրության միջոցների և անձնական սպառման առարկաների արտադրության։ Սակայն խստորեն այդ մեթոդոլոգիային հետևելու դեպքում ոչ նյութական ոլորտին պետք է դասվեր, օրինակ, արդյունաբերության «Բ» խմբի արտադրանքը, որը նախատեսված է անձնական սպառման համար։

Բնակարանային-կոմունալ տնտեսությունը և կենցաղային սպասարկումը հիմնականում իրականացնում են նյութական բարիքների արտադրություն (հագուստի կարում, կոշիկի, կահույքի և այլնի պատրաստում, որը հաշվի է առնվում արդյունաբերության համապատասխան ճյուղերում), արդեն ստեղծված բարիքների վերականգնում (կոշիկի վերանորոգում, հագուստի ձևափոխում և լցակարում, հեռուստացույցների, կահույքի, մետաղյա իրերի, կենցաղային սարքերի նորոգում, հագուստի լվացում, քիմիական մաքրում, քաղաքների սանիտարական մաքրում, աղբի փոխադրում, կանաչապատում, ջրատար և այլ փիստեմների սպասարկում)։ Ներկայումս ԿՎՎ-ն նյութական արտադրության կազմում հաշվի է առնում բնակարանային-կոմունալ տնտե-

սության այն մասը միայն, որը զբաղված է ջեռուցմամբ, տաք ջրի մատակարարմամբ (կենտրոնացված կարգով) և այդ ճյուղի համար ոչ բնորոշ գործունեությամբ (աղբի վերամշակման գործարանների արտադրանքը հաշվի է առնվում արդյունաբերության ճյուղերի կազմում)։ Մինչդեռ, բնակարանային-կոմունալ տնտեսության մեջ միայն որոշ հիմնարկություններ են զբաղված ոչ նյութական ֆունկցիաներով, ինչպես, օրինակ, ամառանոցային և բնակարանային կոոպերատիվները, ուսումնական հաստատությունների հանրակացարանները։ Սակայն այդ ճյուղի գործունեությունը մեծ մասամբ անմիջականորեն ուղղված է բնության առարկաների վերափոխմանը։ Այնտեղ կատարվող պրոցեսները սկզբունքորեն նույնն են, ինչ արդյունաբերության մյուս ճյուղում։ Ուստի այն պետք է դասել նյութական արտադրության ոլորտին, ինչպես այդ արվել է սովետական վիճակագրության մեջ՝ մինչև 1967 թ.։ Դա չի հակասում նաև ԿՎՎ-ի ընդունած նյութական արտադրության բնորոշմանը։ Ակնհայտ է կոմունալ տնտեսության որոշ ենթաճյուղեր (գազի, ջրի, ջերմության, էլեկտրաէներգիայի մատակարարում) ըստ արդյունքի օգտագործման՝ երկու ոլորտների միջև բաժանելու անիրավացիությունը։։ Արդյունքի նշանակումը, ինչպես արդեն նշվել է, ոչնչով կապված չէ նյութական և ոչ նյութական արտադրության ոլորտների սահմանների որոշման հետ։

Կենցաղային սպասարկումը հավաքական ճյուղ է, որն առանձնացվել է պրակտիկ նպատակներից ելնելով՝ ըստ պահանջմունքների որոշակի խումբ բավարարելու հատկանիշի։ Այդ հատկանիշը չի համապատասխանում նյութական և ոչ նյութական ոլորտների սահմանազատման չափանիշին, ուստի և նրա մեջ մտնող ենթաճյուղերը պետք է բաժանել երկու մասի։ Այդ հարցում ԿՎՎ-ի մոտեցումը հիմնականում ճիշտ է. միանգամայն իրավացի է նյութական ոլորտին կենցաղային այնպիսի ձեռնարկությունների դասումը, որոնք բնակչության անհատական պատվերներով պատրաստում և վերանորոգում են անձնական սպառման առարկաներ, կատարում են հագուստների լվացում, ներկում և քիմիական մաքրում և այնպիսիք, ինչպիսիք են լուսանկարչատները, կինոլաբորատորիաները, շինարարական և շինվերանորոգման գրասենյակները։ Ճիշտ չէ միայն բնակարանները մաքրող կազմակերպությունների դասումը ոչ նյութական ոլորտին, այն դեպքում, երբ դրանք կարող են նյութական արտադրությանը դասվել այն նույն հիմքերի վրա, որոնցով լվացքատները, քիմիական մաքրման և ներկման ձեռնարկությունները դասվում են նյութական ոլորտին։ Գործունեության այդ տեսակները վերականգնում են նյութական բարիքների սպառողական հատկությունները։

Կենցաղային սպասարկման ձեռնարկություններից տեղեկատու, թարգմանչական և մեքենագրական, թաղման բյուրոները, բաղնիքները, վարսավիրանոցները, վարձույթի կետերը, իրավաբանական կոնսուլտացիաները և այլ հիմնարկություններ գլխավորապես կատարում են ոչ նյութական ֆունկցիաներ։ Այստեղ բնության առարկաների ձևափոխում տեղի չի ունենում, գործունեությունն ուղղված է լինում կա՛մ բնության գաղափարական պատկերին, կա՛մ անմիջականորեն մարդկանց։

Ինչ վերաբերում է հասարակական սննդին, որը ԿՎՎ-ի պրակտիկայում հաշվառվում է առևտրի հետ միասին, ապա նրա կետերը, ի տարբերություն առևտրի, կատարում են յուրահատուկ ֆունկցիաներ։ Դրանք զբաղվում են ոչ միայն պատրաստի արտադրանքի իրացմամբ, այլ նաև իրականացնում են սննդի պատրաստումը, այն հասցնում վերջնական սպառման պատրաստ վիճակի, սպառողներին սպասարկում և այլն։ Հասարակական սննդում և առևտրում աշխատանքի հիմնական պրոցեսների և գործունեության նպատակների չհամընկնելը թույլ է տալիս դրանք առանձնացնել որպես ինքնուրույն ճյուղեր։

Վերջին տարիներին և՛ առևտրում, և՛ հասարակական սննդում կատարվում են որակական փոփոխություններ։ Արտադրության զարգացմանը զուգ-

ընթաց ընդլայնվում է կիսաֆաբրիկատների արտադրությունը և դրանց կենտրոնացված մատակարարումը, առևտրում և հասարակական սննդի որոշ ձեռնարկություններում կիրառվում է ինքնասպասարկման մեթոդը, առևտրից անջատվում է բաժնեկշռելու, փաթեթավորելու և տեսակավորելու ֆունկցիաների մեծ մասը, իսկ հասարակական սննդից՝ մթերքները պատրաստի վիճակի հասցնելու և ապասարկման ֆունկցիաների մի մասը, որի հետևանքով դրանք ավելի ու ավելի են մոտենում ոչ նյութական ոլորտին։ Իհարկե, նույնիսկ այն դեպքում, երբ առևտուրն ու հասարակական սնունդը հասնեն զարգացման բարձր մակարդակի, դրանցում ինչ որ չափով տեղ կգտնեն արտադրական ֆունկցիաներ։ Բայց ճիշտ չէր լինի դրանք բաժանել երկու մասի, որովհետև նյութական և ոչ նյութական ոլորտների սահմանները պետք է որոշվեն ըստ աշխատանքի բաժանման համակարգում տվյալ ճյուղի ֆունկցիոնալ միասնության։

Նյութատեխնիկական մատակարարման և իրացման, մթերող ձեռնարկությունների գործունեության մեջ գերակշռում են դուտ կառավարման ֆունկցիաները. արտադրության միջոցների պլանաչափ բաշխումն ու փոխանակությունը, մատակարարման, իրացման, մթերումների պլանների կատարման նկատմամբ հաշվառումն ու վերահսկողությունը։ Գործունեության այդ տեսակների միջոցով շրջապատող աշխարհի առարկաների հատկությունների փոխակերպում տեղի չի ունենում, այդտեղ մշակվում է նյութական բարիքների մասին ինֆորմացիան, կոլեկտիվների գործունեությանը կազմակերպված բնույթ է հաղորդվում, ուստի նրանք պետք է պատկանեն ոչ նյութական արտադրությանը։

Այսպիսով, հասարակության զարգացմանը զուգընթաց նյութական և ոչ նյութական ոլորտների միջև ժողովրդական տնտեսության ճյուղերի դասակարգումն անհրաժեշտ է կատարելագործել, որը հնարավորություն կտա բարելավել դրանց պլանավորումը։

К ВОПРОСУ О РАЗГРАНИЧЕНИИ МАТЕРИАЛЬНОЙ И НЕМАТЕРИАЛЬНОЙ СФЕР НАРОДНОГО ХОЗЯЙСТВА

ДОНАРА ЛАЗАРЯН

Резюме

В последние годы экономисты все чаще занимаются изучением вопросов, связанных с материальной и нематериальной сферами народного хозяйства. Однако, несмотря на многочисленные исследования в этой области, до сих пор нет единого мнения по вопросу о критерии разграничения и составе отраслей каждой из сфер. Нечетко формулируется структура материальной и нематериальной сфер производства в классификации отраслей народного хозяйства, принятой ЦСУ и Госпланом СССР. Поэтому становится необходимым правильное определение границ двух сфер.